

«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿԻ ՀԻՄՈՒՆՔԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ  
2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ

## ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է՝

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին

«Հանրապետություն» կուսակցությանը

### Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հանրապետություն» կուսակցության (այսուհետ՝ Կուսակցություն) կից ներկայացված հատուկ նպատակի հիմունքի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունը (այսուհետ՝ տարեկան ֆինանսական հաշվետվություն), որը ներառում է 2025 թվականի տարեկան ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի ու գույքի վերաբերյալ տարեկան հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությանը կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ այս եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հարցերի ազդեցության, տարեկան ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով պատրաստված է «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022թ. հուլիսի 22-ի N 04-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) ֆինանսական հաշվետվողականությանը վերաբերող պահանջներին համապատասխան:

### Վերապահումով կարծիքի հիմք

1. 2025 թ.-ին Կուսակցությանը հատկացվել է 37,018 հազար ՀՀ դրամ պետական ֆինանսավորում, որից 22,385 հազար ՀՀ դրամը՝ պետական ընդհանուր ֆինանսավորում և 14,633 հազար ՀՀ դրամը՝ պետական նպատակային ֆինանսավորում: Հաշվետու տարում Կուսակցության կատարած ընդհանուր ծախսերը կազմել են 35,514 հազար ՀՀ դրամ, այդ թվում՝ պետական նպատակային ֆինանսավորման գծով կատարված ծախսերը՝ ընդամենը 300 հազար ՀՀ դրամ:

Կուսակցությունը տարեկան ֆինանսական հաշվետվությանը կից չի ներկայացրել 2025 թ.-ին պետական նպատակային ֆինանսավորման հաշվին կատարված ծախսերի վերաբերյալ հավելվածը (բացվածքը): Հաշվետվության համաձայն՝ նշված միջոցներից կատարված ծախսերը կազմել են 300 հազար ՀՀ դրամ: Սակայն մեզ չեն տրամադրվել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ գնահատելու համար, թե հաշվետու տարում կատարված ծախսերը որ չափով են ֆինանսավորվել պետական նպատակային ֆինանսավորման միջոցների հաշվին և, համապատասխանաբար, թե արդյոք պահպանվել են նպատակային ֆինանսավորման օգտագործման սահմանափակումները՝ համաձայն Օրենքի 26-րդ հոդվածի 7-8-րդ մասերով նախատեսված պահանջների:

2. Նախորդ հաշվետու տարում Կուսակցության կողմից օգտագործվել են անհա (հիմնականում անորոշ ժամկետով) տրամադրված տարածքներ, որոնք, ըստ ղեկավարու ներկայացրած տեղեկատվության, հաշվետու տարում չեն օգտագործվել: Միաժամանակ տարածքների օգտագործման իրավունքը պետական գրանցում չի ստացել, և հաշվ տարվա համար չեն ներկայացվել դրանց անհատույց օգտագործման իրավ դադարեցումը հավաստող համաձայնագրեր կամ այլ համապատասխան փաստաթղթեր: Օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ բնեղենով նվիրատվությունները ենթակա գնահատման շուկայական արժեքով և պետք է արտացոլվեն տարեկան ֆինանսա հաշվետվությունում: Սակայն մեզ չեն տրամադրվել բավարար և համապատաս աուդիտորական ապացույցներ՝ գնահատելու համար, թե արդյոք հաշվետու տարում առ եղել անհատույց օգտագործման արդյունքում առաջացող բնեղենով նվիրատվություն որոնք պետք է արտացոլվեին տարեկան ֆինանսական հաշվետվությունում:

3. Տարեկան ֆինանսական հաշվետվության «Կուսակցության մասին ա տեղեկատվություն» աղյուսակում «Կուսակցության ամփոփ տվյալներ» տողը լրացվա Մասնավորապես, բացակայում են անդամների թվի, կուսակցության գործունեու նպատակների և խնդիրների, ինչպես նաև այլ պահանջվող տեղեկատվության վերաբ տվյալները: Օրենքի 27-րդ հոդվածի և Որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ ն տեղեկատվությունը ենթակա է ներկայացման տարեկան ֆինանսական հաշվետվություն:

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (այսու ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվու լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվու տարեկան ֆինանսական հաշվետվության աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ Կուսակցությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտ խորհրդի (այսուհետ՝ ՀՄԷՍԽ) կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթի կանոնագրքի և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոն Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտոր ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

#### **Հանգամանքի շեշտադրում/ ֆինանսական հաշվետվողականության հիմունքը**

Մենք ուշադրություն ենք հրավիրում տարեկան ֆինանսական հաշվետվությանը կից «Հ նպատակի հիմունքը» ծանոթագրությանը, որտեղ նկարագրվում է ֆինանսա հաշվետվողականության հիմունքը: Տարեկան ֆինանսական հաշվետվությունը պատր ված է՝ Օրենքի և Որոշման ֆինանսական հաշվետվողականությանը վերաբ պահանջներին համապատասխանելու համար: Ուստի, տարեկան ֆինանսա հաշվետվությունը չի կարող կիրառվել այլ նպատակով: Մեր կարծիքը, սույն հանգամա պայմանավորված, չի ձևափոխվել:

#### **Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող ան պատասխանատվությունը տարեկան ֆինանսական հաշվետվության համար**

Կուսակցության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվող նությանը վերաբերող դրույթների համաձայն տարեկան ֆինանսական հաշվետվո պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որո

ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ տարեկան ֆինանսական հաշվետվություն պատրաստումն ապահովելու համար:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Կուսակցության Տարեկան ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

### **Աուդիտորի պատասխանատվությունը տարեկան ֆինանսական հաշվետվության աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ տարեկան ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն տարեկան ֆինանսական հաշվետվությունն օգտագործողների՝ այդ տարեկան ֆինանսական հաշվետվության հիման վրա կայացվող որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի պատճառով տարեկան ֆինանսական հաշվետվության էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի պատճառով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կուսակցության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում

